ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՇՈՒՄ Գիտակրթական կենտրոն ՀԿ

Ավարտական

հետազոտական աշխատանք

Թեմա

Ժողովրդավարությունը դպրոցում

Կատարող

Աիդա Խաչատրյան Մկրտիչի

Ջաջուռի միջնակարգ դպրոց ,դասվար, 1-ին խումբ

Ղեկավար `

Սիրվարդ Թամազյան

Բովանդակություն

Ներածություն 3
Գլուխ 1.Կրթության դերը ժողովրդավարության կայացման գործում 5
Գլուխ 2.Դպրոցի ժողովրդավարական կառավարում 11
Եզրակացություն 14
Օգտագործված գրականության ցանկ 15

Ներածություն

Ժողովրդավարությունը քաղաքակիրթ աշխարհի արժեքներից մեկն է։ Ժամանակակից աշխարհում այն նույնիսկ ավելի կարևոր է , քան երբևէ ։ Անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր քաղաքացի իրազեկ լինի ժողովրդավարական արժեքների մասին և գործածի դրանք , իսկ այդ գործընթացը սկսվում է դպրոցից։

Աշխատանքի նպատակն է հասկանալ , թե ինչպիսի դեր ունի դպրոցը ժողովրդավարության կայացման գործում , ուսումնասիրել այն ուղիները , որոնցով հնարավոր է հասնել դպրոցի ժողովրդավարացմանը , քանզի միայն ժողովրդավարորեն կառավարվող ինստիտուտը կարող է քաղաքացիներիների գիտակցությանը հասու դարձնել ժողովրդավարություն ասվածը։

Գլուխ առաջին: Կրթության դերը ժողովրդավարության կայացման գործում

Ժողովրդավարություն տերմինը ծագել է հունարեն demokratia բառից ,որը բացվում է հետևյալ կերպ `Demos-ժողովուրդ և kratos –կառավարել։( ժողովրդի կողմից կառավարվող )Այն կիրառվել է մ.թ.ա 5-րդ դարի կեսերից սկսած մատնանշելու համար այն քաղաքական համակարգերը ,որոնք գոյություն ունեին հունական որոշ քաղաք-պետություններում ,հատկապես`Աթենքում։ Հին հունական ժամանակաշրջանից ի վեր դեմոկրատիան տեսականորեն և գործնականորեն կրել է առանցքային փոփոխություններ։Ցեղային ու ցեղախմբային ժամանակաշրջանում կիրառվող ուղիղ դեմոկրատիան արդեն 18-րդ դարում ազգային պետությունների ձևավորմամբ փոխարինվեց ներկայացուցչականով ։Ներկայացուցչական ժողովրդավարությունը պահանջում է մի շարք քաղաքական ինստիտուտների առկայություն ,որոնք զգալիորեն տարբերվում էին անտիկ շրջանում գործող ինստիտուտներից ։

Կիրառելով ինդուկտիվ մեթոդը (մասնավոր փաստերից ընդհանուր եզրահանգման գալը)`փորձենք առանձնացնել ժողովրդավարության առանցքային հատկանիշները և տալ վերջինիս սահմանումը։

Ժողովրդավարությունը ենթադրում է `

1.ժողովուրդը հանդիսանում է լեգիտիմ իշխանության միակ աղբյուրը և կրողը.ժողովրդավարական երկրներում իշխանության համար պատասխանատվությունը պատկանում է ժողովրդին ,ավելի կոնկրետ հասարակության չափահաս քաղաքացիներին ,ովքեր իզորու են ազատորեն ընտրել իրենց ներկայացուցիչներին ընտրությունների ,ազատ քվեարկության միջոցով ։Յուրաքանչյուր երկրում ,որտեղ իշխում են ժողովրդավարական արժեքները կառավարությունը իշխանություն ստանում է ժողովրդից ,որը տեղի է ունենում 4-5 տարին մեկ կազմակերպվող ընտրություն կոչված գործընթացի միջցով։

2. ժողովրդավարական երկրում Սահմանադրությունը երկրի գերագույն օրենքն է ,որը սահմանում է կառավարության(իշխանության)հիմնական իրավունքներն ու

պարտականությունները ։Սահմանադրության մեջ ամրագրված են պետական իշխանության քաղաքական և քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները իր քաղաքացիների նկատմամբ։

3.Օրենքի գերակայություն- սա ժողովրդավարության կարևորագույն հատկանիշներից մեկն է , որի պարագայում բոլոր անձինք ,մարմինները ,հանրային մասնավոր կառույցները ,ներառյալ պետությունը ,հաշվետու են օրենքների առաջ ,այդ օրենքները հասանելի են բոլորին ,հավասարապես կիրառվում և մեկնաբանվում են անկախ դատարանների կողմից ,համապատասխանում են մարդու իրավունքների պաշտպանության միջազգային ստանդարտներին ու նորմերին ։

4. Անհատի իրավունքներ .Ժողովրդավարության հիմնական նպատակը մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների պաշտպանությունն է ։Դրանք են՝խոսքի ազատություն ,մտքի ,խղճի , դավանանքի ազատություն ։Իրավունքներից կառանձնացնենք ընտրելու և ընտրվելու իրավուքնը ։Ժողովրդավարությունը տալիս է հավասար քաղաքական իրավունքներ յուրաքանչյուր քաղաքացուն ։ Յուրաքանչյուր ոք ունի խոսքի և հավաքների ազատություն։Սա ներառում է խաղաղ ցույցեր ,հավաքներ ,մամուլի ազատություն, NGO (հասարակակամ կազմակերպություններ) առկայություն և այլն։ Ժողովրդավարությունը բաղկացած է անկախ դատական համակարգից,որը կենտրոնացած է մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության վրա ։ Ընհանրացնելով նշենք , որ **ժողովրդավարությունը ժողովրդի իշխանությունն է , կառավարման մի ձև ,որը հիմնվում է ժողովրդի կամքի վրա ։**

Դեմոկրատ երկրներում ժողովրդավարությունը դրսևորվում է հասարակական-քաղաքական կյանքի տարբեր ոլորտներում ։Ժողովրդավարության հասնելը բարդ գործընթաց է , որին առավելապես նպաստում է լավ կրթական համակարգ ունենալը։

Դպրոցը պետք է ընկալվի ոչ միայն որպես հաստատություն ,որը աշակերտներին տալիս է գիտելիքներ և որոշ հմտություններ,այլև որպես միջավայր, որը սոցիալիզացնում է նրանց ։Կրթությունը ժողովրդավարացնող ուժ է ,որը օգնում է պատրաստել քաղաքացիներ ակտիվորեն մասնակցելու ժողովրդավարական կյանքի բոլոր ասպեկտներին։

Ջոն Դյուին իր <<Առաջադիմական կրթության նախագիծ>> աշխատության մեջ հիմնավորում է ,որ կրթության նպատակները պետք է ուղղված լինեն երիտասարդներին ժողովրդավարական կյանքի բոլոր ասպեկտներում լիարժեք և ակտիվ մասնակցելու նախապատրաստմանը։Ժողովրդավարական կյանքի բոլոր ասպեկտներին ակտիվորեն մասնակցելու համար անհրաժեշտ հմտություններն են՝ քննադատաբար մտածելու կարողություն , քաղաքական կյանքին ակտիվորեն մասնակցելու ցանկություն՝ներգրավվելով տեղական որոշումների կայացման գործընթացներում ։Այս իմաստով , դպրոցները ,որոնք տալիս են աշակերտին հմտություններ ակտիվորեն մասնակցելու ժողովրդավարական գործընթացներին , ինքնին արտացոլում են ժողովրդավարական սկզբունքները ոչ միայն խոսքով , այլև գործով ։

Շելդոն Բերմանը իր <<Երեխաների սոցիալական գիտակցությունը և սոցիալական պատասխանատվության զգացումը>>գրքում նկատում է, որ բոլոր ինստիտուցիոնալ կառույցները ,լինի դա աշխատավայր , ընտանիք , դասարան կամ դպրոց ,որոնք տալիս են երիտասարդներին հնարավորություն մասնակցելու կարևոր հարցերի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացին , ազդում են նրանց պատասխանատվության զգացողության , ժողովրդավարական արժեքները և գործընթացները ըմբռնելու և նրանց անձնական ու քաղաքական արդյունավետությունը վրա ։Աշակերտները ժողովրդավարության մասին սովորում են ոչ միայն այդ մասին լսելով , այլև իրենց դպրոցում որոշումների կայացման եղանակները տեսնելով։

Գլուխ երկրորդ: **Դպրոցի ժողովրդավարական կառավարում**

Դպրոցի ժողովրդավարացումը միանգամից տեղի չի ունենում , այն շարունակական գործընթաց է ։Իսկապես ժողովրդավարական է այն միջավայրը , որտեղ անհատները կարող են կառուցողականորեն փոխազդել ուրիշների հետ , որտեղ մարդիկ կարող են համաձայնել կամ չհամաձայնել որոշ հարցերի շուրջ , որտեղ մարդու իրավունքները և օրենքի գերակայությունը պաշտպանվում և հարգվում են ։
Ժողովրդավարական դպրոցական միջավայր ստեղծելու պատասխանատվությունը պատկանում է դպրոցի տնօրենին կամ ղեկավարին։Ժողովրդավարական երկրներում կան այլ շահագրգիռ կողմեր , որոնք ունեն դպրոցի հաջողության նկատմամբ շահագրգռվածություն `աշակերտներ , ծնողներ , ուսուցիչներ և ավելի լայն համայնք։Դպրոցի տնօրենները իրենց աշխատանքում պետք է հաշվի առնեն մի շարք գործոններ՝օրենսդրություն, կրթական չափորոշիչներ , առարկայական ծրագրեր, մրցակցությունը այլ դպրոցների հետ։Նշված գործոններից շատերն անընդհատ փոխվում են և դպրոցի ղեկավարները չեն կարող վերահսկել և կառավարել այս ամենը, ուստի ժամանակակից դպրոցի հաջող, արդյունավետ և կայուն կառավարման համար բաց և ժողովրդավար մոտեցումը միակ ճանապարհն է ։
Կան գործունեության մի քանի բնագավառներ,որոնք ունեն առավել մեծ նշանակություն, գնահատելու համար ինչ մակարդակում է դպրոցի

ժողովրդավար կառավարումը կամ ինչպես է դպրոցը գնում ժողովրդավարության ճանապարհով։

Առանձնացնենք 4 հիմնական ոլորտներ.

- Ուսուցում
- Դաստիարակություն
- Կառավարում
- Համագործակցություն

Ուսուցում: Ուսուցումը միայն գիտելիքների փոխանցումը չէ , այլ այն արժեքների համակարգը , որը կարևոր է այդ հասարակության համար։Ուստի , այլ ոլորտը գնահատելիս պեռք է նայել , թե ինչպիսի տեղ են գրավում և դերակատարում ունեն ժողովրդավարական արժեքներն ուսուցման գործընթացում։

Դաստիարակություն: Շատ հաճախ կրթություն ասելով հասկանում ենք ուսուցում և դաստիարակություն , սակայն դաստիարակությունը պետք է առանձնացնել `դիտարկելով որպես սովորողների կարգապահությունը ` որպես դաստիարակչական խնդիր, ավելի ճիշտ, խոսել կարգապահության բացակայության մասին ,քանի որ այսօր այն դարձել է առանցքային հիմնախնդիրներից մեկը ոչ միայն շատ դպրոցներում , այլ նաև կրթական համակարգում առհասարակ։

Գոյություն ունի թյուր պատկերացում այն մասին ,որ դպրոցում ժողովրդավարությունն ու կարգապահությունը անհամատեղելի են ։

Կառավարում:Այս ոլորտը գնահատելիս պետք է հաշվի առնել ` հատկապես ժողովրդավարական սկզբունքներն ու արժեքները ինչպես են ազդում կառավարման համակարգի և դպրոցի ամենօրյա կյանքի վրա։

Համագործակցություն: Համագործակցությունը ուղղված է նրան ,թե ինչպես է դպրոցը արձագանքում հասարակությանը, որին պետք է ծառայի , աշակերտներին, որոնց համար գոյություն ունի,ինչպես նաև ծնողներին , որոնք համարվում են ուսումնական գործընթացի մասնակիցներ։Համագործակցությունը կապված է նաև այն բանի հետ , թե ինչքանով է դպրոցը ակտիվ և բարյացակամ գործընկեր այլ կազմակերպությունների հետ։

Դպրոցի ուսումնական մասի ժողովրդավարացումը ենթադրում է բարեփոխումներ, կրթության վերաիմաստավորում։Ուսումնասիրելով 21-րդ դարի աշխատաշուկան `կարող ենք առանձնացնել գործատուների`շրջանավարտներին ուղղված մի շարք պահանջներ ,հմտություններ , որոնք պետք է դպրոցական կրթությունը ապահովի. Դրանք են `համագործակցության հմտություններ ,քննադատական մտածողություն , խնդիրների լուծման կարողություն ,ստեղծագործականություն, հաշվետվողականություն ,ձեռներեցություն, ՏՀՏ գրագիտություն և այլն ։Սրանք բոլորը կենսականորեն կարևոր հմտություններ են , այնուամենայնիվ դպրոցում հիերարխիկ հարաբերություններն ու դասավանդման ավանդական մեթոդները սովորողներին չեն տրամադրում վերը թվարկված հմտությունները ։Սովորողների մոտ նոր վարքագիծ ձևավորելու և այդ հմտությունները զարգացնելու համար պետք է անցում կատարել **փորձառական ուսուցման (ExL) սոցիալ-կոնստրուկտիվիստական մոտեցման** շրջանակներում։Այն թույլ է տալիս սովորողներին սովորել գործողության, փորձի միջոցով։Այս

մեթոդը չի ներառում <<սովորել անգիր>>-ի միջոցով ավանդական մեթոդը ,որում կա սովորեցնող , ով գիտի և խոսում է , և կա սովորող,ով չգիտի և պարզապես պասիվ լսում է ։

Երկարատև ուսումնասիրությունների արդյունքում միջազգային փորձագետների կողմից դուրս են բերվել այն չափանիշներն ու ցուցիչները, որոնք անհրաժեշտ են դպրոցի զարգացման և դեմոկրատացման համար[1]։

- Կրթական միջավայրի որակ (ներառելով դպրոցի կրթական-դաստիարակչական գործունեությունը)։
- Մասնագիտական միջավայրի որակ (այդ թվում ուսուցիչների որակավորման բարձրացում)։
- Դպրոցի արդյունավետ փոխհամագործակցություն (համայնքի աջակցությամբ դպրոցի խնդիրների լուծում)։
- Դպրոցական միջավայրում առողջության և անվտանգության երաշխիքներ(սովորողների ֆիզիկական և հոգեկան առողջության ապահովում)։
- Դպրոցի կառավարաման արդյունավետություն և պատասխանատվություն։
- Դպրոցի գործունեության փաստացի ճշգրիտ , իրական գնահատում։

Կրթական միջավայրի որակ

Անհրաժեշտ նախապայմանները.

- նախագծային գործունեությունը որպես ուսումնական պլանի կամ կրթական ծրագրերի պարտադիր մաս,

- սովորողների ինքնուրույն գործունեությունը առկայությունը և դրա շարունակականությունը ավագ դպրոցում,
- անհատական կրթական երթուղու հնարավոր ընտրության առկայությունը ավագ դպրոցում
- հատոկ կարիքներ ունեցող սովորողների կրթական պահանջների բավարարման համար անհրաժեշտ պայմանների առկայությունը,
- սովորողների համայնքային, սոցիալական ծրագրերի մասնակցությունը որպես դպրոցի աշխատանքային պլանի պարտադիր մաս ,
- տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում, ուսուցման ակտիվ և ինտերակտիվ մեթոդների կիրառումը ուսումնական գործընթացում,
- կրթական գործընթացում սովորողների մասնավոր կյանքի պաշտպանության մեխանիզմների առկայությունը,
- սովորողների կողմից դասավանդման որակի և դպրոցական մթնոլորտի գնահատման առկա համակարգի առկայությունը,
- աշակերտական խորհուրդների և հասարակական կազմակերպությունների
- համագործակցության առկայությունը:

Մասնագիտական միջավայրի որակ

- Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների մասնագիտական զարգացման վերապատրաստման գործընթացի ապահովում:
- Դպրոցի ռազմավարության և զարգացման նպատակով բաց քննարկում:

- Ուսուցիչների անհատական և թիմային նախագծերի առկայություն:
- Հասարակական և մասնագիտական միջոցառումների անցկացման առկայություն:
- Համագործակցային մթնոլորտի առկայությունը:

Դպրոց-համայնք համագործակցություն.

- Կապի ապահովման և համագործակցության առկայություն, նախագծային աշխատանքների և կրթական ծրագրերի ներկայացման ժամանակ:
- Համագործակցության ընդլայնման ապահովում:
- Տարեկան զեկույց՝ կատարված աշխատանքների ներկայացում:
- Դպրոցի կայքի պարբերական թարմացում:
- Համագործակցություն դպրոցի շրջանավարտների հետ՝ կրթական գործընթացի զարգացման ուղղությամբ
- ԶԼՄ-ների հետ ակտիվ համագործակցություն

Դպրոցական միջավայրի անվտագության երաշխիքներ

- Դպրոցի արդյունավետ գործունեության նպատակով քննարկումների արդյունքում նորմերի և կանոնների ընդունում:
- Երեխաների և անձնակազմի առողջությունը ապահովող մեխանիզմի առկայություն:
- Հոգեբանասոցիալական աջակցության կարողության առկայություն:

- Սովորողների ֆիզիկական և հոգեբանական վիճակի մշտադիտարկման մեխանիզմի առկայություն:

Դպրոցի կառավարման արդյունավետություն և պատասխանատվություն

Երկարաժամկետ և միջնաժամկետ նպատակների ձևակերպում և հաստատում

- Նպատակների իրականացման մեխանիզմների ձևավորման ապահովում (ծրագրեր, նախագծեր, նորմատիվ-իրավական փաստաթղթեր):
- Նպատակներին հասնելու համար բաց և հասկանալի ցուցիչների առկայություն:
- Մշտադիտարկում անցկացնելու համակարգի ապահովում:
- Կոնֆլիկտների և վեճերի հաղթահարման, բաց և արդարացի լուծման հնարավորության ապահովում:
- Աշակերտական ինքնավարության մարմինների առկայություն:
- Դպրոցի կառավաարման խորհրդի ամենամյա հաշվետվության առկայություն:Դպրոցի գործունեության գնահատման հուսալի և օբյեկտիվ համակարգի առկայություն:
- Սովորողների անհատական զարգացման գնահատում:
- Ուսուցիչների և վարչական աշխատողների աշխատանքի հանրային, բաց գնահատում:
- Դպրոցի ձեռքբերումների և բոլոր ուղղություններով փոփոխությունների վերաբերյալ տվյալների բաց համակարգի առկայություն :

- Դպրոցի գործունեության հասարակական վերահսկողության մեխանիզմի առկայություն (սովորողներ, ուսուցիչներ, ծնողներ, համայնքի բնակիչներ)։

Դպրոցի կառավարումը վերջինիս մարդկային և ֆինանսական պոտենցիալի նեդաշնակումն է։Դպրոցի դեմոկրատական կառավարումը հիմնված է՝

- Համագործակցության
- խորհրդակցությունների
- շահառու անձանց կողմից արվող առաջարկությունների
- որոշումների կայացման մեջ նրանք ակտիվ մասնակցության
- պրոֆեսիոնալիզմի
- փոխադարձ հարգանքի
- գործընկերային հարաբերությունների՝ինչպես դպրոցի ներսում , այնպես էլ դպրոցների միջև։

Շահառուների թվին են պատկանում աշակերտները , ուսուցիչները , ինպես նաև ծնողները ։ Շատ կարևոր է , որ աշակերտները ներգրավված լինեն իրենց դպրոցներում դպրոցական կյանքի փոփոխության և բարելավման գործընթացում։Այդ ներգրավվածությունը իրականանանում է աշակերտների ներկայացուցչական խորհուրդների միջոցով; Դպրոցը ընտրում է աշակերտների ներկայացուցիչներին՝համաձայն դպրոցում գործող համակարգի։Աշակերտ-ներկայացուցչի դերը պետք է ունենա իրական արժեք , որպեսզի բոլոր աշակերտները իսկապես ներգրավված լինեն դպրոցի ժողովրդավարական կառավարման գործընթացում և զգան , որ իրենք իսկապես գնահատված են ։Այս դեպքում աշակերտները դառնում

են դպրոցի բարեփոխման առաջամարտիկ։Աշակերտ-ներկայացուցիչները պետք է դպրոցում ունենան որոշակի ինքնուրույնություն,օրինակ՝ տոնական միջոցառումների ժամանակ ինքնուրույն կառավարել բյուջեն։Աշակերտները պետք է մասնակցություն ունենան դպրոցի կանոնակարգի մշակման գործում։ Այս ամբողջ գործընթացում աշակերտներին հնարավորություն է տրվում զգալ իրենց ուժը , քանի որ նրանք ոչ միայն նպաստում են դպրոցական կյանքի բարելավմանը , այլ նաև տեղեկացված են դառնում այդ փոփոխությունների իրականացման գործընթացից։Օրինակ՝ իրավական հարցերի և դրա հետ կապված ցանկացած սահմանափակումներ հասկանալը և բյուջեի կառավարումը։Աշակերտները պետք է համագործակցեն նաև այլ դպրոցների աշակերտների հետ, և արդյունքում կարողանան հասկանալ տարբեր դպրոցների համակարգերը և մտածելակերպը։Այս համագործակցությունը հնարավորություն է տալիս աշակերտներին դառնալ ավելի մոտիվացված։

Ծնողական խորհուրդը նույնպես կարող է նշանակալի դերակատարություն ունենալ հանրակրթական հաստատության կրթության որակի նկատմամբ վերահսկողություն սահմանելու գործում , ինչպես նաև նպաստել դպրոցի կառավարման արդյունավետության բարձրացմանը՝ կապ հանդիսանալով դպրոցի և արտաքին աշխարհի հետ։ Սակայն ծնողական խոչհուրդների գործունեությունը մի շարք թերություններ ունի։Որպես կանոն՝ ծնողական խորհրդում ընդգրկված ծնողները չափազանց պասիվ են ։Նրանք հիմնականում իրազեկված չեն ծնողական խորհրդի լիազորությունների վերաբերյալ և հարկ եղած դեպքում խուսափում են բարձրացնել իրենց

օրինական պահանջները։ Ծնողական խորհուրդներում ներգրավված ծնողներն իրենց անդամակցությունը դիտարկում են ավելի շատ որպես սեփական երեխայի շահերը պաշտպանելու լծակ , այլ ոչ թե սովորողների ընդհանուր խնդիրները լուծելու միջոց։

Ուսուցչի դերը դեմոկրատական դպրոցում աշակերտի մոտ դեմոկրատական արժեքներ սերմանելն է ,**դեմոկրատ դասարան** ստեղծելը։։Դեմոկրատական դասարանը սովորելու միջավայր է , որտեղ երեխաների ձայնը լսելի է , և կիրառվում է աշակերտակենտրոն մանկավարժական մեթոդներ։[2]

Սովորել-սովորեցնել գործընթացը իրականանում է աշակերտ ուսուցիչ համատեղ ջանքերով ։Նրան պետք է պլանավորեն այդ գործընթացը համագործակցային ձևով։Նրանք միասին պետք է որոշեն այդ գործընթացի կանոններն ու ընթացակարգերը ։Ժողովրդավարական սկզբունքներով առաջնորդվող ուսուցիչը առաջնորդվում է հետևյալ կանոններով՝

- Թույլ է տալիս , որ աշակերտները ազատորեն ընտրություն կատարեն առանջ միջամտության և պարտադրանքի։
- Աշակերտների հետ քննարկում է նրանց՝ իրանց առջև դրված ընտրությունների դրական և բացասական կողմերը ։
- Օգնում է աշակերտներին առավել ճիշտ որոշումներ կայացնել

Ժողովրդավարական դասարանի բնութագրիչներն են ՝

- **Դեմոկրատական արժեքները** : Այդ արժեքները երեխաներին տալիս են ազատություն ունենալու իրենց տեսակետը այն ամենի նկատմամբ ,ինչ նրանք սովորում են դպրոցում։Ժողովրդավարական դասարանը երեխաներին դարձնում է իրազեկ և գիտակից։

- **Ուսուցիչների պատասխանատվությունը:**ժողովրդավարական դասարանում ուսուցիչները կիսում են որոշումների կայացման պատասխանատվությունը աշակերտների հետ , ապահովում են հավասարության և աշակերտակենտրոն սկզբունքներով կազմակերպված դաս, ստեղծում են միջավայր արդյունավետ հաղորդակցության համար , կարևորություն են տալիս բոլոր աշակերտներին առանց խտրականության , տրամադրում են հնարավորություն, որպեսզի աշակերտը արտահայտի իր տեսակետը , ներգրավում է աշակերտներին ուսումնական գործընթացում:
- **Աշակերտների դերը:** Ժողովրդավարական դասարանում աշակերտը ինքն է ընտրում և որոշում իր ուղղությունը ,օրինակ ՝ աշակերտը որոշում է սովորել այն ձևովը, որը իրեն հետաքրքիր է ։
- **Դասարանի մթնոլորտ:**Դեմոկրատ դասարանը գործում է որպես խումբ. եթե խմբի անդամներից մեկը ունի խնդիր ,այդ խնդրի հասցեատերը դառնում են բոլորը:Դասարանը պետք է զարգացնի խմբային ,այլ ոչ թե անհատական մթնոլորտ:

Եզրակացություն

Ամփոփելով աշխատանքը՝ տեղին կլինի ցիտել Լ. Լակեդոմոնսկիյի խոսքերը՝<<Մի մարդ ցանկանում է ժողովրդավարություն հաստատել իր երկրում: Մարդիկ նրան ասացին՝սկզբից ժողովրդավարություն հաստատիր քո տանը ,ապա երկրում>>:

Այս խոսքերից կարելի է եզրակացնել , ժողովրդավարական պետություն ունենալու համար պետք է առաջին հերթի ժողովրդավարությունից բխող արժեքները սերմանելու գործընթացը սկսել դպրոցից: Պետությունները մեկ կամ երկու քայլով չեն կարող թռիչք կատարել դեպի ժողովրդավարություն :Դրան հասնելը երկարատև գործընթաց է , որը պահանջում է դեմոկրատիայի սերմանում երեխաների մոտ կրթության միջոցով : Բացի կրթությունից՝որպեսզի երեխան հասկանա ժողովրդավարական արժեքները և ձգտի հասնել իր պետության ժողովրդավարացմանը , պետք է իր առջև ունենա ժողովրդավարական արժեքներով կառավարվող դպրոց:

Գրականության ցանկ

1.<<Դպրոցի ժողովրդավարական կառավարման մոդել>>. Ուղեցույց դպրոցների վարչական և մանկավարժական աշխատողների համար ։Երևան 2014

2.Ժողովրդավարության և մարդու իրավունքների կրթության հայեցակարգ. Նախագիծ

3, Guardian student guide

4.britannica.com

5.Textbook.com The function of a teacher in a democratic classroom is …

Bihar CET B,ED. Offficial Paper

6.etwinning.net Աշակերտները կարող են և պետք է ներգրավված լինեն իրենց հաստատություն դպրոցական կյանքի փոփոխության և բարելավման գործընթացում։

7.Kent State University , What is Experiential Learning and Why is it important?

8,uvm.edu , Democracy and Education , Schools amd Communities Research Project